

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 58/4

28 դեկտեմբերի 2012թ.

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 18.12.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանի 10.12.2012թ-ի դիմում-բողոքը « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 30.11.2012թ. թիվ 2118381 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերագրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 08.11.2012թ. թիվ 2212367 հանձնարարագրի, « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն՝ հսկիչ գնում: Արդյունքում 15.11.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2212367 արձանագրությունը (այսուհետ նաև արձանագրություն), որում մասնավորապես նշված է հետևյալը.

Կենտրոնի ՀՏ մասնագետ Գառնիկ Քամայանի կողմից 14.11.2012թ-ին ժամը 13:07-ին ք.Երևան, Վարդանանց 78 հասցեում գտնվող 85 տաղավարից կատարվեց հսկիչ գնում 600 դրամի չափով՝ 4 հատ ձգան և 8 հատ անկյունակ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի կտրոն չտրամադրեց: Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 13:09-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց Z հաշվետվություն 0 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 600 դրամը, ժամը 13:10-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 13:10-ին նորից դուրս բերվեց Z հաշվետվությունը 600 դրամ ընդհանուր գումարով: Գնված ապրանքները տնտեսվարող սուբյեկտի կողմից ետ չընդունվեցին և ետ չվերադարձվեց հսկիչ գնման գումարը:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքով սահմանված կարգով:

Որից հետո, համաձայն « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 21.11.2012թ. թիվ 2118381 հանձնարարագրի, « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանի մոտ կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 30.11.2012թ-ին կազմվել է թիվ 2118381 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150.000 դրամ:

Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանի բողոքում մասնավորապես նշված է.

Ս.թ. նոյեմբերի 14-ին ժամը 13:00-ից 13:10-ի սահմաններում ինձ մոտեցավ ոմն մեկը, ով ներկայացավ հարկային տեսուչ և ցույց տալով մի քանի ձգան ու անկյունակ հայտնեց, որ տուգանված եմ, որովհետև վաճառքն իրականացնելուց չեմ ներկայացրել ՀԴՄ կտրոնը: Ես առարկեցի, քանի որ այդպիսի ապրանք չէի վաճառել և պահանջեցի ներկայացնել գնորդին: Ի սկզբանե նշեմ, որ գնորդը այդպես էլ չներկայացավ: Տեսուչը զանգահարեց ինչ-որ մեկին, հարցրեց, թե ինչպես հանի «Z»-ը, ՀԴՄ-ի հետ գործողություններ կատարեց և հանեց ինչ-որ թուղթ, ապա հեռացավ՝ պահանջելով ներկայանալ հարկային տեսչություն: Քանի որ ես

ապրանք չէի վաճառել, և այդ ոմն գնորդը այդպես էլ չհայտնվեց, հարկային տեսուչի գործողությունները որակելով որպես ապօրինություն, ես հրաժարվեցի ներկայանալ: Առանց իմ համաձայնության կազմված արձանագրությունը ստանալով՝ ներկայացել եմ Կենտրոնի հարկային տեսչություն և կրկին հայտնել եմ իմ անհամաձայնությունը՝ պահանջելով գնորդին: Կրկին գնորդին չներկայացնելով և իմ բողոք-պահանջները անտեսելով՝ պահանջեցին վճարել տուգանք 175.000 դրամի չափով այն խախտման համար, որ չեմ կատարել:

Ելնելով այս ամենից՝ ներկայացնում եմ բողոքս և մատնանշում մի շարք ակնհայտ սուտ տվյալներ, որոնք տեղ են գտել հարկային տեսուչների կազմած արձանագրության մեջ:

Արձանագրությունում նշված է, որ ստուգումը իրականացվել է այլ անձի միջոցով, իսկ ժամանակը նշված է 13:07-ը, իսկ <Z> կատարվել է 13:10-ին: Այսինքն ստացվում է, որ և գնորդը, և հարկային տեսուչը, և ես՝ վաճառողս, միաժամանակ ներկա ենք գտնվել առևտուրը կատարելու և խախտումը արձանագրելու պահին: Սա բացարձակ սուտ է և չի համապատասխանում իրականությանը: Ավելին, երբ ես հարկային տեսչությունում կրկին պահանջեցի ներկայացնել գնորդին, այլապես կդիմեմ դատարան, նախագահի վերահսկողության ծառայություն, գլխավոր դատախազին, սակայն կրկին գնորդին չներկայացվեց:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանը խնդրում եմ քննել դիմում-բողոքը և տալ արդարացի լուծում:

<< ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ դիմում-բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Կենտրոնի ՀՏ մասնագետ Գառնիկ Քամայանը նշեց, որ իր կողմից 14.11.2012թ-ին, ժամը 13:07-ին ք.Երևան, Վարդանանց 78 հասցեում գտնվող 85 տաղավարից կանխիկ դրամով կատարվել է հսկիչ գնում 600 դրամի չափով՝ 4 հատ ձգան և 8 հատ անկյունակ: Սակայն, Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի կտրոն չի տրամադրել:

Ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողները ներկայացրել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 13:09-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն 0 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ գումարով 600 դրամ, ժամը 13:10-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 13:10-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվություն 600 դրամ ընդհանուր գումարով:

Գնված ապրանքները Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանին առաջարկվել է ետ ընդունել և վերադարձնել հսկիչ գնման գումարը, սակայն վերջինս հրաժարվել է: Ընդ որում, քննարկման ընթացքում Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանը հաստատեց, որ ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ինչ-որ ապրանքներ և առաջարկել ետ ընդունել, սակայն Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանը, պատճառաբանելով, որ դրանք իր մոտից չեն գնվել հրաժարվել է ետ ընդունելուց:

Ուսումնասիրությունն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին նաև, որ ք.Երևան, Վարդանանց 78 հասցեում գտնվող տաղավարների կողմից (<Գնունու շուկա>) առևտրի հիմնական մասը կատարվում է մինչև 14:00-ն ընկած ժամանակահատվածում:

Քննարկվող դեպքում ուսումնասիրության ընթացքում՝ ժամը 13:09-ին հանված Z հաշվետվության համաձայն, Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանը հասույթը կազմել է 0 դրամ:

Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանի բողոքում նշված այն պնդումը, որ արձանագրությունում նշված է, որ ստուգումը իրականացվել է այլ անձի միջոցով չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, արձանագրությունում հստակ նշված է, որ հսկիչ գնումը կատարվել է Կենտրոնի ՀՏ մասնագետ Գառնիկ Քամայանի կողմից, որն ընդգրկված է << ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ պետի 08.11.2012թ. թիվ 2212367 հանձնարարագրում:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Վլադիմիր Զանգոյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի <բ> ենթակետի պահանջները, որի համար ստուգման ակտով կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը՝

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ